# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, Հեռ. (094) 519030 ,
hatsavan.kotayk@mta.gov.am

N 224
*19 նոյեմբեր 2018թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն,Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2018թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 43-Ա որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Ծատուրյան*
*Հեռ./093-212366/*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 43-Ա

## ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի,84-րդ հոդվածի 2-րդ մասի,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016թվականի ապրիլի 14-ի N 17-Ն որոշումը՝

*որոշում եմ*

1. Հացավան համայնքի 2019թվականի տարեկան աշխատանքային պլանի,այսուհետ՝ՏԱՊ,նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:
2.Հաստատել Հացավան համայնքի ՏԱՊ-ի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝համաձայն հավելվածի:
3. Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել Հացավան համայնքի ղեկավարին կից <<Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման>> խորհրդակցական մարմնի անդամ Անի Կարապետյանին:
4. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Անի Կարապետյանին համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում տեղադրել Հացավան համայնքի ՏԱՊ-ի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը,ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում,որոնք մատչելի են համայնքի բնակիչներին:
5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Անի Կարապետյանի վրա:
6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Ալվարդ Խաչատրյանը:

/ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 19
գ.Հացավան